



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒԼԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

COVID-19-ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Մշակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ:

Փետրվար 2022

Այս հրապարակումը կատարվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքների պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում արտահայտված որևէ նյութի, տեղեկության կամ կարծիքի անսխալության, ճշգրտության կամ հավաստիության համար: Հրապարակումը տպագրվել է ՀԳՀՄ-ի կողմից: Սույն հրապարակումը չի արտացոլում ԱՄԿ-ի տեսակետները կամ քաղաքականությունը:

Ներածություն

Հայաստանը ծանր հարված է ստացել Քովիդ-19 համավարակից: 2020 թվականի մարտից մինչև սեպտեմբերի սկիզբը, ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանում երկիրն ունեցել է մեկ շնչի հաշվով երկրորդ ամենաբարձր վարակվածության մակարդակը: Հայաստանում Քովիդ-19-ի դեպքերը գերազանցել են 8,000 վարակվածները 100,000 մարդու հաշվարկով, ինչը շատ ավելի բարձր է տարածաշրջանի այլ երկրներում գրանցված վարակի մակարդակից և գիջում է միայն Վրաստանին: Երկիրը խիստ տուժել է վիրուսից ոչ միայն տարածաշրջանի, այլև նմանատիպ եկամուտ ունեցող այլ երկրների համեմատությամբ: Արդյունքում, Հայաստանի տնտեսությունը տուժեց, շատ փոքր ձեռնարկությունների հայտնվեցին ծանր լարվածության տակ և սրվեց գործազրկության առանց այն էլ բարձր մակարդակը: 2019 թվականին, մինչ համավարակը, գործազրկության մակարդակը հասել էր 18,3 տոկոսի:

Մինչև 2022 թվականը Հայաստանի տնտեսությունը գրեթե V-աձև վերականգնում կունենա: Քովիդ-19-ի սկզբնական ազդեցությունը 2020թ. հանգեցրեց ՀՆԱ-ի 7.4%-ի նվազմանը, ինչը ԵՄ Արևելյան գործընկերության երկրների մեջ ամենասուր անկումն է, որի վրա ազդել է ոչ միայն համավարակը այլև սահմանային հակամարտությունը: Անկմանը կհետևի ՀՆԱ-ի վերականգնումը, որն ակնկալվում է, որ 2021 թվականին կհասնի 6,5 տոկոսի: Եթե չլինի որևէ անկանխատեսելի իրադարձություն, ապա Հայաստանում ՀՆԱ-ի նախահամաճարակային առավելագույն մակարդակը կվերականգնվի 2022 թվականին: Ընդհանուր առմամբ, ՀՆԱ-ի իրական աճը 2022 թվականին կանխատեսվում է, որ կհասնի 4,5%-ի և, հավանաբար, միջնաժամկետ կտրվածքով կբարձրանա տարեկան 4 տոկոսով: Հարկ է նկատել, թե Հայաստանի տնտեսությունը որքան դիմակայուն է եղել այնպիսի ծայրահեղ իրադարձության նկատմամբ, ինչպիսին է համաշխարհային համավարակը:

Հայաստանի ձեռնարկատիրության կառուցվածքը հիմնված է առևտրի ոլորտի վրա: Այս ոլորտը ներկայացնում է Հայաստանի բիզնեսների ընդհանուր թվի 63%-ը, որոնցից 97%-ը 10-ից պակաս աշխատող ունեցող միկրո ձեռնարկություններն են: Գործընկեր երկրների համեմատ՝ Հայաստանում առևտրային գործունեության մակարդակը շատ ավելի բարձր է: Հիմնականում փոքր բիզնեսի կողմից իրականացվող այս գործունեության վրա ավելի բացասաբար են ազդել արգելափակումները: Հայտնի է, որ հայկական միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) ավելի քան 60%-ը խիստ բացասական ազդեցություն է կրել Քովիդ-19-ից, մինչդեռ խոշոր ընկերությունների մոտ այն կազմում է 44 տոկոս: Ինչ վերաբերում է հարկաբյուջետային աջակցությանը, ապա 2021 թվականի մայիսի դրությամբ ձեռնարկությունների 45.6%-ը ստացել է աշխատավարձի սուբսիդավորում և 55.3%-ը՝ դրամական փոխանցումներ: Քովիդ-19-ի պատճառով կորցրած աշխատանքային ժամերը 2020 թվականին կազմել են ընդհանուրի 16.8%, որն ամենաբարձրն է գործընկեր երկրների համեմատ:

Ոչ ֆորմալ հատվածում աշխատող մարդիկ անհամաչափորեն տուժել են Քովիդ-19-ից: Ըստ 2019 թվականի ԱՄԿ վիճակագրության՝ Հայաստանում աշխատողների մոտ 25%-ը զբաղված է եղել ֆորմալ հատվածից դուրս, և վերջին վերլուծություններում այն արդեն նշվում է մոտ 40%: Զգալի խումբ կազմող ոչ ֆորմալ աշխատողներն, այսպիսով, զրկվել են

պետական աջակցության ծրագրերից օգտվելու հնարավորությունից: Կառավարության աջակցությունը տրամադրվել է սուբսիդավորվող վարկավորման, ուղղակի դրամական սուբսիդիաների, խոցելի խավերին միանվագ վճարումների, ոլորտում նորարարական նախագծերի համաֆինանսավորման և այլ միջոցներով: Այնուամենայնիվ, աջակցության չափը ցածր է եղել տարածաշրջանի համեմատությամբ՝ հաշվի առնելով Հայաստանի հարկաբյուջետային վիճակը: Պետական պարտքը 2020 թվականին հասել է ՀՆԱ-ի 63.5%-ին, իսկ 2021 թվականին այն ավելի է աճել տնտեսության մեջ, որը մեծապես կախված է իր մայրաքաղաք Երևանից:

Հայաստանի տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտը մնացել է կայուն՝ չնայած մակրոտնտեսական իրավիճակին: 2020 թվականին ՏՀՏ ոլորտի հարաբերական կշիռը ընդհանուր ՀՆԱ-ում տատանվել է 5%-ի սահմաններում, որտեղ զբաղված են բոլոր հայ աշխատողների 7%-ը: ՏՀՏ աշխատատեղերի միջին աշխատավարձերը երկրում ամենաբարձրն են եղել, ինչպես նաև ոլորտում կանանց մասնակցության մակարդակը: Քովիդ-19-ի բռնկումից ի վեր, տնտեսության այլ ոլորտներում բիզնեսի ավելի մեծ թվայնացման միտում է նկատվել: Այնուամենայնիվ, ձեռնարկությունների նորարարության ցուցանիշներից մեծ մասը Հայաստանում միջին մակարդակում են ԵՄ Գործընկերության շրջանում, իսկ որոշ դեպքերում ավելի ցածր: Բիզնեսների միայն 11.2%-ն է գումար հատկացնում հետազոտությունների և զարգացման համար, իսկ 42.5%-ը նույնիսկ չունի սեփական վեբ կայք: Անհրաժեշտ է լրացուցիչ բարելավում:

Քաղաքականության առաջարկներ

Վերականգնման անհավասար բնույթին հետևելը հնարավորություն կտա ավելի նպատակային աջակցություն ցուցաբերել: Հայաստանում գրանցվել է Քովիդով վարակման բարձր մակարդակ՝ 2020 թվականին ունենալով ՀՆԱ-ի ամենավատ անկումը ԵՄ Գործընկերության տարածաշրջանում: Չնայած 2021 թվականին բուռն վերականգնմանը, բազմաթիվ բիզնեսներ, այդ թվում՝ ինքնազբաղվածները և ֆորմալ հատվածից դուրս աշխատող մարդիկ, դեռ հատուկ օգնության կարիք կարող են ունենալ: Այսպիսով, քաղաքականության ջանքերը պետք է ուղղվեն տնտեսության ոլորտային և տարածքային վերականգնմանը՝ ավելի լավ հասկանալու, թե որ ոլորտներն ու մարզերն ավելի նպատակային օգնության կարիք ունեն: Վաճառքից ստացված եկամուտները, զբաղվածության տվյալները և ներդրումների վիճակագրությունը բիզնեսի մակարդակում պետք է մանրակրկիտ վերահսկվեն: Թեև որոշ ոլորտների անհրաժեշտ կլինի ֆինանսական օգնություն, մյուսներին հնարավոր է կարողությունների զարգացման անհրաժեշտություն առաջանալ:

Աջակցություն ռիսկերի կառավարման մասնագետներին: Արևմտյան կիսագնդում անվճարունակության հայտարարումը և ռիսկերի կառավարումը դարձել են ընկերությունների ձախողման բացասական արտաքին ազդեցությունների կառավարման առանցքային գործելակերպերը: Լավագույն տարբերակում, բիզնեսի ձախողման մասին

պետք է բացահայտել նախքան փաստի արձանագրումը, սակայն երբեմն դա հնարավոր չէ: Ռիսկի կառավարման մասնագետները սովորաբար ֆինանսական կամ իրավաբանական հարցերով են զբաղվում, ովքեր մտնում են ընկերություն՝ հիմնախնդիրը լուծելու համար, այնուհետև հեռանում են ընկերությունից, երբ առաքելությունն ավարտված է: Որոշ երկրներում, օրինակ՝ Միացյալ Թագավորությունում, այդ մասնագետները մասնավոր կազմակերպությունների միջոցով են աշխատում: Այլ երկրներում, նրանք գրանցված են պետական կազմակերպություններում: Նրանք նաև այն մարդիկ են, ովքեր կարող են հանդես գալ որպես ժամանակավոր կառավարիչներ, երբ ընկերությունները ենթակա են անվճարունակության վարույթի:

Փոփոխել կորպորատիվ օրենսդրությունը՝ հեշտացնելու խնդիր ունեցող ձեռնարկությունների ֆինանսական վերակազմավորումը: Հայաստանում բիզնեսի կառավարումը դժվարանում է թերզարգացած կորպորատիվ օրենքի պատճառով, որը թույլ չի տալիս փոխարկելի պարտքի գոյությունը: Պայքարող բիզնեսները սովորաբար բախվում են երկու տարբեր կենսունակության պահպանման չափանիշի: Առաջինը տնտեսական է, որը գնահատում է, թե արդյոք ընկերության հիմքում ընկած աշխատանքային ենթադրությունները ողջամիտ են, թե ոչ: Եվ երկրորդը՝ ընկերության ֆինանսական վիճակի գնահատումն է: Պարտքը սեփական կապիտալով փոխանակելը թեև անբավարար, սակայն սկզբնական քայլն է դեպի ֆինանսական կայունություն: Կորպորատիվ օրենսդրությունը ոչ միայն պետք է թույլ տա պարտքի դիմաց սեփական կապիտալի փոխանակում, այլ պետք է նպաստի դրան: Կարող են նաև ներդրվել նոր ֆինանսական գործիքներ, օրինակ, պարտքային և սեփական կապիտալի գործիքների բնութագրիչներով, ինչպիսիք են՝ արտոնյալ սեփական կապիտալը կամ մասնակցային վարկերը:

Ստեղծել ինտեգրված աջակցության փաթեթ՝ նորարար սկսնակ ձեռնարկությունների համար: Սկսնակ ձեռնարկությունների թիվն աճել էր մինչև համավարակը՝ 8%-ով 2018-2019 թվականներին: Այնուամենայնիվ, նոր բիզնեսի հիմնադրման օրինաչափությունը արտացոլում է բիզնեսների առկա ոլորտային բաշխվածությունը, քանի որ նոր բիզնեսների մեծ մասը ստեղծվել է առևտրային գործունեության մեջ: Կառավարությունը կարող է խթանել բիզնեսի ստեղծումն այլ ոլորտներում՝ ֆինանսավորելով նորարարական հայտերը կամ դառնալով որպես տեղական մշակված հավելվածների գնորդ, որոնք սպասարկում են որոշակի սոցիալական կարիքներ: Այսպիսով, ինտեգրված աջակցության փաթեթը կներառի ռեսուրսներ՝ աջակցելու գիտելիքի զարգացմանն ու փոխանցմանը, ինչպես նաև նորարարություններին աջակցմանն ուղղված հատուկ ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են՝ պայմանական դրամաշնորհները կամ վենչուրային պարտքը:

Ստեղծել ֆինանսական տեխնոլոգիաները կարգավորող գործիքակազմ: Հայաստանում բոլոր բիզնեսների 91,5%-ն ունի բանկային հաշիվ: Թեև այս հարաբերակցությունը թվացյալ բարձր է, այն ամենացածր մակարդակն է գործընկեր երկրների համեմատ, ինչը նշանակում է, որ բոլոր ձեռնարկությունների 8,5%-ը մնում է առանց բանկային հաշվի: Մյուս կողմից, Հայաստանում արժեք-վարկ հարաբերակցությունը տարածաշրջանում ամենաբարձրներից է (200%-ից բարձր), ինչը շատ թանկացնում է գրավադրվող ակտիվները: Բանկային ֆինանսավորման այլընտրանքներն այսպիսով կնպաստեն ֆինանսների հասանելիության ժողովրդավարացմանը՝ մեղմելով այն սահմանափակումը, որին հանդիպում են շատ բիզնեսներ, երբ ակտիվները հասանելի չեն

գրավի պահանջները բավարարելու համար՝ թույլ տալով ՓՄՁ-ներին դիվերսիֆիկացնել իրենց ֆինանսավորման աղբյուրները: Աշխարհի երկրները ստեղծել են կարգավորող գործիքակազմեր, որոնք իրական կյանքի պայմաններում վերահսկվող փորձարկման հարթակներ են նոր տեխնոլոգիաների համար:

Ստեղծել փոխադարձ երաշխիքների ծրագիր: Հայաստանում 70%-ի դեպքում վարկերի ապահովման միջոցը առկա գրավադրումն է: Սա ԵՄ Գործընկերության ամենացածր գործակիցներից մեկն է, որը վկայում է գրավի պահանջները բավարարելու համար ակտիվների սահմանափակ հասանելիության մասին: Փոխադարձ երաշխիքների սխեման ենթադրում է ռիսկի փոխադարձացում և փոխադարձ ռիսկերից վերաապահովագրելու համար պետական վերաերաշխիքային մեխանիզմի առկայություն (և երբեմն նաև երրորդ մակարդակի աջակցություն): Այն նախատեսում է ռիսկերի դիվերսիֆիկացում և հարկատուների գումարների սահմանափակ ներգրավում միաժամանակ ընդլայնելով բիզնեսի համար վարկերի հասանելիությունը: Պետական քաղաքականությամբ կարելի է նման գործիքին տալ կոնկրետ կիրառումներ՝ վերաերաշխիքային մեխանիզմի այլընտրանքը քաղաքականության նպատակներին համապատասխանեցնելով:

Տրամադրել ՓՄՁ-ների կարողությունների զարգացման թվային վաուչերներ: Ամբողջ աշխարհում ՓՄՁ-ներն արագացրել են իրենց անցումը Էլեկտրոնային առևտրի և, ընդհանուր առմամբ, թվային հարթակների՝ Քովիդ-19-ի բռնկումից հետո: Այնուամենայնիվ, Հայաստանում ՓՄՁ-ների կողմից թվային հարթակների օգտագործման վերաբերյալ տվյալները կցկտուր են և թույլ չեն տալիս խորը գնահատական տալ փոփոխության ուղղության վերաբերյալ: Այսպիսով, ՓՄՁ-ների թվային ստուգումները պետք է իրականացվեն որպես պետական քաղաքականության մաս՝ համոզվելու, որ ձեռնարկությունները արդիականացված են թվային տեխնոլոգիաներով, առանց որոնց նման անցում հնարավոր չի: Եվրոպական երկրների կառավարություններն այժմ ակտիվ խթանում են վաուչերային սխեմաները, որոնք տրամադրվում են մասնավոր հատվածի դերակատարների հետ համագործակցությամբ՝ հեշտացնելու ՓՄՁ-ների հիմնական թվային իրավասությունների և հարակից կարողությունների ձեռքբերումը: Դրանք սովորաբար առաջարկում են հավատարմագրված գործընկերները սուբսիդավորված գներով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հաշվապահությունը, մարդկային ռեսուրսների կառավարումը, Էլեկտրոնային մարքեթինգը, Էլեկտրոնային վաճառքը, կիբերանվտանգությունը և թվային աշխատանքային ծրագրերը:

Աջակցել ապագայի հմտությունների զարգացմանը: Հայաստանում ներկայումս նկատվում է որոշակի ոլորտներում աշխատուժի հմտությունների առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն: Այս անհամապատասխանությունը կարծես թե թաքնված է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը, սակայն ի վերջո, նաև մյուս ոլորտներում: Պետական քաղաքականությունը կարող է աջակցել մասնավոր հատվածի ընկերությունների կողմից կառավարվող աշկերտության և աշխատանքային պրակտիկայի ծրագրերին: Այս ծրագրերը կարող են ներառել տարբեր աստիճանի պետական համաֆինանսավորում՝ ըստ որակավորված ձեռնարկությունների չափի և նորարարության: Բացի այդ, բարձր եկամուտ ունեցող երկրների կառավարությունները որոշ դեպքերում խորանում են ապագայի հմտությունները կանխատեսելու (մի փոքր սպեկուլյատիվ) բիզնեսի մեջ: Մյուս կողմից,

մյուսները հետամուտ են անցյալի հմտությունների վերածննդին, սակայն հագեցած ժամանակակից տեխնոլոգիաներով և հարմարեցված այսօրվա աշխարհին:

Աշխատանքային օրենսդրությունը թարմացնել թվայնացված XXI դարին համահունչ:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում տնից աշխատելու համապարփակ շրջանակ: Տնից կամ հեռավար աշխատանքը կշարունակվի նաև Քովիդ-19 համավարակից հետո: Այնուամենայնիվ, աշխատանքային կանոնակարգերի մեծ մասը դեռ հարմարեցված չեն տնից աշխատելու ներկայիս հանգամանքներին: Քանի որ համավարակն արդեն մարում է, ՀՀ կառավարությունը և մասնավոր հատվածի կազմակերպությունները, օրինակ՝ գործատուների միությունը, պետք է ձգտեն ընդհանուր եզրեր գտնել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ առցանց մոնիտորինգի սահմանափակումները և աշխատակիցների գաղտնիությունը, լրացուցիչ ծախսերը, որոնք կրում են տնից աշխատող աշխատակիցները, ինչպես հավասարակշռել ծնողական և աշխատանքային պարտավորությունները, հեռավար աշխատողների նկատմամբ գրասենյակային աշխատողների համեմատ խտրական բացասական գործելակերպի բացառումը, կատարողականի գնահատումը և աշխատակիցների համար վիրտուալ ժամանակի հաշվարկը:

Ստեղծել կենտրոնացված հարթակ, որտեղ աշխատանք փնտրողները եվ աշխատանք առաջարկողները կարող են կապ հաստատել միմյանց հետ:

Տեխնոլոգիան շատ հզոր գործիք է, որը թույլ է տալիս ապամիջնորդավորել բազմաթիվ գործողություններ, այդ թվում՝ աշխատանքային մանդատները: Պետական հատվածի կողմից կառավարվող աշխատատեղերի հարթակը կարող է օգտակար լինել՝ թույլ տալով կողմերի միջև ներգրավվածությունը, կրթական վկայականների ինքնաշխատ ճանաչումը և տարբեր կատեգորիաների աշխատատեղերի, տարածքների և հմտությունների համար առաջարկվող միջին աշխատավարձի ցուցանիշը: Նման մեխանիզմի ամկայությունը թույլ կտա նաև քաղաքականություն մշակողներին ավելի լավ կառավարել կրթական առաջարկները, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում, գուցե նույնիսկ փոխելով պետական համալսարանների ֆինանսավորման ձևը: Այն ձեռնարկությունները, որոնք ակտիվորեն ներգրավված են հարթակում կամ որպես աշխատատեղերի լավագույն մատակարարներ կամ առաջատար աշխատատեղերի մատակարարներ, կարող են օգտվել հարկային արտոնություններից:

Ամփոփում

- Վերականգնման անհավասար բնույթին հետևելը թույլ կտա ավելի նպատակային աջակցություն ցուցաբերել:
- Աջակցել ռիկերի կառավարման մասնագետների ներգրավմանը:
- Փոփոխել կորպորատիվ օրենսդրությունը՝ հեշտացնելու ինդիքներ ունեցող ձեռնարկությունների ֆինանսական վերակազմավորումը:
- Ստեղծել ինտեգրված աջակցության փաթեթ՝ նորարար սկսնակ ձեռնարկությունների համար:
- Ստեղծել ֆինտեխ կարգավորող գործիքակազմ:
- Ստեղծել փոխադարձ երաշխիքների ծրագիր:
- ՓՄՁ-ներին տրամադրել կարողությունների զարգացման թվային վաուչերներ:
- Աջակցել ապագայի հմտությունների զարգացմանը:
- Աշխատանքային օրենսդրությունը թարմացնել՝ թվայնացված XXI դարին համահունչ:
- Ստեղծել կենտրոնացված հարթակ, որտեղ աշխատանք փնտրողները և աշխատանք առաջարկողները կարող են կապ հաստատել միմյանց հետ: